Հավելված N 303
Հաստատված է
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության գլխավոր քարտուղարի
2020 թվականի հունիսի 5-ի N 253-Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1.Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության (այսուհետ՝ Վարչություն) հուշարձանների պահպանության տարածքային գործունեության համակարգման բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (այսուհետ՝ Գլխավոր մասնագետ) (ծածկագիր՝ 18-34.18-Մ2-6):

1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի Գլխավոր մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վ.Սարգսյան 3, Կառավարական շենք N 2

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. իրականացնում է հուշարձանների պահպանության բնագավառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համապատասխանության նկատմամբ մոնիտորինգ (վերահսկողություն).
2. իրականացնում է համատեղ այցելություններ և մասնակցում նախատեսված աշխատանքների ընթացքին՝ հասարակական, գիտակրթական, տեղական կազմակերպությունների և միջազգային հնագիտական արշավախմբերի կողմից հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանությանը և օգտագործմանն առնչվող աշխատանքներին աջակցելու նպատակով,
3. իրականացնում է հուշարձանների պետական հաշվառման և փաստագրման աշխատանքներին առնչվող տեղեկատվության ուսումնասիրություն, աջակցում է պետական հաշվառման աշխատանքների իրականացմանը և ներկայացնում առաջարկություն նոր հայտնաբերված օբյեկտին նորահայտ հուշարձանի կարգավիճակ տալու վերաբերյալ.
4. իրականացնում է շրջայցեր հուշարձաններ ունեցող բնակավայրերի գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, գոտևորման նախագծերի, դրանց հատվածների կառուցապատման,
5. իրականացնում է անօրինական հետախուզման, պեղումների, ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքների բարեկարգման աշխատանքների դադարեցման ուղղությամբ միջոցառումները.
6. իրականացնում է շրջայցեր, ուսումնասիրում հուշարձանի հետախուզման, պեղման, ամրակայման, նորոգման, վերականգնման աշխատանքների ընթացքը, ինչպես նաև հուշարձաններ ներառող ատարծքներում հողային, շինարարական, գյուղատնտեսական և այլ աշխատանքները.
7. իրականացնում է ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից հուշարձանների և

դրանց պատմական միջավայրի, վերականգնման աշխատանքների, հնագիտական հուշարձանների և մշակութային շերտերի վերաբերյալ հարցադրումներին առնչվող շրջայցեր

Իրավունքները՝

- համապատասխան մարմնի ստորաբաժանումների ներկայացուցիչների և Բաժնի մասնագետների հետ կազմակերպելու աշխատանքային քննարկումներ, դիմումատու համապատասխան կազմակերպություններից և Վարչության բաժիններից ստանալու նախատեսված ծրագերի վերաբերյալ տեղեկատվություն, ստանալու փաստաթղթեր, համապատասխան մարմիններից պահանջելու նախագծային փաստաթղթեր, սխեմաներ տեղեկատվություն, ւ պարզաբանումներ, զեկուցագրեր, հաշվետվություններ և կազմակերպելու աշխատանքային քննարկումներ.
- համապատասխան կազմակերպություններից պահանջելու ներկայացնել համաձայնեցված նախագծային առադրանքները, նախագծային և այլ փաստաթղթեր.
- համապատասխան մարմիններից և կազմակերպություններից ստանելու հուշարձանների և դրանց պատմական միջավայրի պահպանության, վերականգնողական, հետախուզման և պեղումների վերաբերյալ տեղեկատվություն, պարզաբանումներ և հաշվետվություններ.
- համապատասխան մարմինների և ստորաբաժանման ներկայացուցիչների հետ կազմակերպելու հուշարձանների պահպանության և օգտագործման գործընթացներին առնչվող քննարկումներ՝ համատեղ միջոցառումների իրականացման վերաբերյալ.
- իրականացնելու քննարկումներ Հայաստանի Հանրապետության տարածաշրջաննում գտնվող հուշարձանների պահպանության և օգտագործման խնդիրների վերաբերյալ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ, համագործակցել հուշարձանների պահպանության և օգտագործման միջոցառումների ապահովման հարցում.
- համապատասխան ստորաբաժանումներից ստանալու տեղեկատվություն, վավերագրական և այլ անհրաժեշտ փաստաթղթեր, կազմակերպելու քննարկումներ:

Պարտականությունները՝

- ուսումնասիրել հուշարձանների պահպանության բնագավառի օրենսդրական ակտերը, հուշարձանների պահպանության և օգտագործման ուղղությամբ իրականացված աշխատանքները և ներկայացնել տեղեկատվություն դրանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանության վերաբերյալ.
- հողերի նպատակային նշանակության փոխելու նպատակով և ներկայացնել եզրակացություն.
- մասնակցել համապատասխան կազմակերպությունների ներկայացուցիչների հուշարձաններ այցելություններին, ըստ հանձնարարականի, աջակցում նախատեսված աշխատանքներին.
- իրականացնել հուշարձանների պահպանության զարգացման հնարավորությունների, դրա կառավարման սկզբունքների, իրականացման ձևերի և կարգերի բարելավման վերաբերյալ ուսումնասիրություն և ներկայացնել առաջարկություններ.
- արգելել կամ դադարեցնել հուշարձանի հետախուզման, պեղման, ամրակայման, նորոգման, վերականգնման աշխատանքների ընթացքը, ինչպես նաև հուշարձաններ ներառող տարածքներում հողային, շինարարական, գյուղատնտեսական և այլ աշխատանքները, եթե այդ աշխատանքները վնասել են կամ դրանց շարունակումը կարող է վնասել հուշարձանը կամ դրա պահպանական գոտին.
- ներկայացնել առաջարկություն նոր հայտնաբերված օբյեկտի պատմամշակութային արժեք ներկայացնելու, օբյեկտին նորահայտ հուշարձանի կարգավիճակ տալու հարցը փորձագիտական հանձնաժողովում քննարկելու վերաբերյալ.
- ուսումնասիրել ներկայացված նախագծային առաջադրանքները և նախագծերը, ստուգում

փաստաթղթակազմը, համապատասխանությունը օրենսդրության պահանջներին և ներկայացնել առաջարկություն դրանց համաձայնեցման մասին.

- արգելել կամ դադարեցնել շրջայցերի ընթացքում հայտնաբերված հուշարձանների անօրինական հետախուզման, պեղումների, ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքները.
- շրջայցերի ընթացքում կատարած ուսումնասիրությունների արդյունքում արգելում կամ դադարեցնել բացահայտված հուշարձանների հետախուզման, պեղման, ամրակայման, նորոգման, վերականգնման, ինչպես նաև հողային, շինարարական, գյուղատնտեսական և այլ աշխատանքները, եթե դրանք վնասել են կամ դրանց շարունակումը կարող է վնասել հուշարձանը կամ դրա պահպանական գոտին.
- ուսումնասիրել հուշարձանների պահպանության վերաբերյալ հարցադրումները, շրջայցերի ընթացքում ուսումնասիրում բարձրացված հարցերը, ամփոփում և հուշարձանների պահպանության օրենսդրությամբ սահմանված դրույթներին համապատասխան՝ տրամադրում ճշտված և լիարժեք տեղեկատվություն.
- ուսումնասիրել հուշարձանների պահպանվածության վիճակը և ներկայացնել տեղեկատվություն վտանգված և վթարային վիճակում գտնվող հուշարձանների վերաբերյալ (ցուցակ).
- սահմանված կարգով իրականացնել քաղաքացիների նամակների (դիմումների և բողոքների) քննարկում, անհրաժեշտության դեպքում՝ տեղային դիտանցում և տեղում կատարել բարձրացված հարցերի ուսումնասիրություն և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին համապատասխան՝ նպաստել դրանց լուծմանը.
- սահմանված կարգով և սահմանված ժամկետներում ապահովել դիմումների և բողոքների պատասխանները, ըստ անհրաժեշտության կատարել քաղաքացիների ընդունելություն:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաները՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում,վերլուծություն
5. Բարեվարքություն:

Ընտրանքային կոմպետենցիաները՝

1. Փաստաթղթերի նախապատրաստում
2. Բողոքների բավարարում
3. Ժամանակի կառավարում
4. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահախորդակցություն
5. Բանակցությունների վարում:

4.Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատաքի կամակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորություններ

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումներ և ներկայացուցչություն

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում համապատասխան մարմնի և կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: